

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԵ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
ՍԱՐԿԱԲԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ
ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԲԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝
զհաւատոցն շինուած կառուցից» (Բան Ժ, ք):

Աստուծոյ ամենառատ ողորմութեամբ ազգային մեր կեանքը գալիք տարում
հոգեշաղախ է հաւատաշէն մեծ ու պանծալի երկու յոբելեաններով: Սուրբ
Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամեայ և «Մատեան ողբերգութեան»
աղօթագրքի 1000-ամեայ խորհուրդներով կոչուած ենք շնորհանորդութեան
քրիստոնէական մեր սուրբ հաւատի մէջ և դէպի Տէրը մեր ճանապարհին:

Նախախնամաբար, Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի՝ իբրև հայոց Մայր Աթոռ
օծումից ուղիղ եօթ հարիւր տարի անց, Նարեկայ վանքի Սուրբ Գրիգոր Վանականի
աղօթասաց գրիչը աւարտեց «յոգնաթախանձ բանից» անմահ «Մատեանը»:

Մէկ հազարամեակ «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» ծովացած հայցով
Նարեկայ սուրբը անվախճան զրոյց է սկսել Աստուծոյ հետ: Մէկ հազարամեակ
մարդկային հոգին բուրվառ դարձրած՝ աղօթում է զղջասրտութեամբ,
աստուածային սիրոյ ու ողորմութեան անհատում յոյսով և հաւատի անխորտակ
շէնքը կառուցելու աննահանջութեամբ. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր
աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից» (Բան Ժ, ք):

«Մատեանի» տողերից հաւատն է յառնում իբրև բարձրագոյն արժեք,
առաքինութեան ակունք ու բարեմասնութեանց չափորոշիչ: Հաւատի Տաճարն է
վերականգնուում Նարեկայ Մեծ Վարդապետը, Աստուածատես Տաճարը հոգու, որի
խորանից անմար ճառագում է փրկութեան յոյսի կանթեղը՝ լուսաւորելով մեղքը
մերժելու ու դէպի Տէրը ընթանալու ճանապարհը. «Ի՞նչ կայ, արդարև, աւելի չքնաղ,
խօսքից, մտքից վեր... քան երկբայութեան թանձր խաւարից Աստուծոյ օգնութեամբ
մաքրուած սիրտն այն մեղաւորի, որ խորասուզուել է կործանման վիհի անդունդն
անյատակ, բայց ունի նաև փրկութեան նշխար... Կարող է յուսալ հասնելու նորէն
նախապարգնեալ փառազարդութեան» (Բան ԺԱ, ա):

Ապաւինած Աստուծոյ մեծագոյն ու անգերազանցելի մարդասիրութեանը,
փառաւորելով մարդկութեան փրկութեան համար Աստուածորդու զոհաբերութեան
ճշմարտութիւնը, հաւատը՝ «դասակից ու պատուակից» սիրոյ և յոյսի, մեղքից

ազատում, նորոգում ու վեհացնում է մարդկային հոգիները: Հաւատով սրբեալ ու զօրացեալ հոգին գիտէ բարձրանալ, եթէ գայթել է ու ընկել, ի զօրու է շրջել ժամանակների սխալ ընթացքները, դէպի բարին վերափոխել կեանքը, ստեղծագործել յանուն խաղաղութան ու արդարութան, շինութան ու վերածննդի, յանուն երջանկութեան ու կեանքի:

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, երբ Մայր Տաճարի 1700-ամեայ և «Ողբերգութեան Մատեանի» 1000-ամեայ աստուածատես խորհուրդներով միաւորուել են բեղունութեամբ պսակազարդ 303 և 1003 թուականները հայ կեանքի և քրիստոնէական մեր ողջ անցեալն ու ներկան՝ հաւատի նոր ուխտով ի մի գանք Աստուծոյ առաջ իբրև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Հոգի ու մարմին ամոքող բուժարար աղօթքով Սուրբ Նարեկացու հետ նայենք հոգուց ներս ու տեսնենք այնտեղ անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձաւորութիւնը: Հաւատով հաստատենք մեր ընթացքը դէպի ակունքը կեանքի, ակունքը ամենայն բարեաց ու շնորհաց, Աստծուն ընտրենք մեր բոլոր գործերին զօրակից և Սուրբ Նարեկացու հետ բարձունքներն ի վեր աղօթք խնկարկելով՝ հաւատով հայցենք, որ Փրկիչ Տէրը Ամենախնամ ու Փրկագործ Իր Սուրբ Նշանը դրոշմի մեր բոլոր ճանապարհներին:

Թող մեր աղօթքը «փառաբանութեան վերընծայութեամբ» միախառնուի նարեկեան խօսքով մէկ հազարամեակ հայ հոգուց հնչած բիւր աղօթքներին՝ վերստին ու առմիշտ ճշմարտելով, որ աղերսական ողբամատեանի աղօթական ոգով հաւատի շէնքը պիտի կառուցենք: Եւ թող մեր հաւատից ծնուած գործերը ուղղորդեն վերածննդի նոր ճանապարհը հայութեան կեանքի, մեր Հայրենիքի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Գոհութեան և փառաբանութեան աղօթքով առ Աստուած, որ օրինել է Հայկազեան ազգս հոգևոր անմահ ու անհամար գանձերով, գալիս ենք հրաւեր կարդալու ի Հայաստան և ի Սփիւռս մեր ժողովրդին՝ հաւատաւոր հոգով և արժանիի մատուցմամբ 2003 թ. տօնելու Սուրբ Գրիգոր Նարեկացի Վարդապետի «Ողբերգութեան Մատեանի» 1000-ամեայ դարակազմիկ տարեդարձը:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. ամէն:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Նոյեմբերի
Յամի Տեառն 2002 և ի թուին Հայոց ՈՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 121